

## Արձանագրություն հ.1

2019 թ. ապրիլի 26 -ին կայացավ Երևանի <<Հայրապետ Հայրապետյանի անվան հ.78 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կողեզիալ կառավարման խորհրդի հերթական նիստը: Նիստին մասնակցում էին ութ անդամներից յոթը:  
Բացակա Զիրաքյան -Մանուկյան Կարինե:  
Նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էր դպրոցի գործադիր տնօրեն Ազնիվ Հովհաննեսի Միրզոյանը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Կողեզիալ կառավարման խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Նիստը վարելու իրավունքը, համաձայն ՀՀ պետական ուսումնական հաստատություն ՊՈԱԿ-ի կողեզիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի 19-րդ կետի, վերապահվեց տարիքով ավագ խորհրդի անդամ Լաուրա Մամիկոնի Հակոբյանին:  
Նախագահողն առաջարկեց մինչև օրակարգի հարցին անցնելը ծանոթանալ խորհրդի նոր կազմին և ընտրել նիստի քարտուղար:  
Նիստի անդամների համաձայնությամբ քարտուղար ընտրվեց ծնող խորհրդի անդամ Գայանե Հակոբի Պետրոսյանը:

ԼՍԵՑԻՆ - 1- Կողեզիալ կառավարման խորհրդի նախագահի ընտրության հարցը :

Հարցի մասին հաղորդեց Լաուրա Հակոբյանը՝ քանի որ ձևավորվել է կողեզիալ կառավարման խորհրդի նոր կազմ անհրաժեշտ է ընտրել նոր նախագահ:  
Նախագահը պետք է ընտրվի կողեզիալ կառավարման խորհրդի անդամներից:  
Հակոբյանն առաջարկեց ներկայացնել թեկնածուներ: Կատարվեց փակ գաղտնի քվեարկություն, որի անդյունքում ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ վերընտրվեց գործող նախագահ Մարինե Ժորայի Համբարձումյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Գեղամ Կարապետյանը, Ալբերտ Արշակյանը, Լաուրա Հակոբյանը – ներկայացրեցին Մարինե Համբարձումյանին, որպես քանիմաց, գործին գիտակ անձնավորություն, աշխատասեր, երկար տարիների փորձ ունեցող, հմուտ մանկավարժ ով կարողանում է ճիշտ կազմակերպել կողեզիալ կառավարման խորհրդի աշխատանքները:

Ելնելով կատարված քննարկումներից կողեզիալ կառավարման խորհուրդը՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

ա/ Հաստատել կողեզիալ կառավարման խորհրդի նախագահի ընտրության փակ գաղտնի քվեարկության արդյունքները

բ/ Համաձայն ՀՀ պետական ուսումնական հաստատություն ՊՈԱԿ-ի կողեզիալ կառավարման մարմնի խորհրդի ձևավորման կարգի 20-րդ կետի, խորհրդի նախագահ ընտրել Մարինե Ժորայի Համբարձումյանին:

Նիստի նախագահ՝

Քարտուղար՝

Մ. Համբարձումյան

Գ. Պետրոսյան